ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ը ՆՇՎԵԼ Է ՈՐՊԵՍ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ»

09.12.2019 20:34

Հայաստանի Հանրապետությունում դեկտեմբերի 6-ին առաջին անգամ նշվել է «Փաստաբանի օրը» և փաստաբանության 101 ամյակը: Հակոբ Պարոնյանի անվան պետական թատրոնում մեծ հանդիսավորությամբ տեղի է ունեցել միջոցառում:

Միջոցառմանը մասնակցել են բազմաթիվ փաստաբաններ և հյուրեր:

Փաստաբաններին շնորհավորելու էին եկել նաև՝

- ***Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց***՝ դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը,

- ***դատական իշխանությունից***՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Երվանդ Խունդկարյանը, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ Ռուզաննա Հակոբյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներ, ՀՀ ԲԴԽ անդամներ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Լիլիթ Թադևոսյանը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Վազգեն Ռշտունին, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի նախագահ Արսեն Մկրտչյանը, ՀՀ վարչական դատարանի նախագահ Աղասի Դարբինյանը, սնանկության դատարանի նախագահ Գարիկ Ավագյանը, վճռաբեկ դատարանի դատավորներ, վերաքննիչ դատարանի դատավորներ, առաջին ատյանի դատարանի դատավորներ, ինչպես նաև Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը,

- ***ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը***, աշխատակազմի ներկայացուցիչներ,

- ***գործադիր իշխանությունից***՝ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռաֆիկ Գրիգորյանը, ՀՀ ոստիկանության պետի պաշտոնակատար Արման Սարգսյանը, Արցախի Հանրապետության արդարադատության նախարար Արարատ Դանիելյանը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը,

- ***քննչական մարմիններից***՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Հայկ Գրիգորյանը և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Սասուն Խաչատրյանը.

- ***օրենսդիր իշխանությունից***՝ ՀՀ ԱԺ պատգամավորներ

- ***գիտության ոլորտի ներկայացուցիչներ***:

Փաստաբանի օրվա կապակցությամբ հանդես է եկել ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Երզնկյանի ղեկավարած էստրադային սիմֆոնիկ նվագախումբը:

Միջոցառման ընթացքում ցուցադրվել է կարճամետրաժ տեսաֆիլմը փաստաբանության օրվա մասին:

Ներկաներին իրենց ողջույնի խոսքն են ներկայացրել ամենաաերիտասարդ փաստաբան 22 ամյա Նելլի Օհանյան և 95 ամյա փաստաբան Մայիս Ավետիսյանը:

Միջոցառման ընթացքում պարգևատրվել են և խրախուսվել են 40 և ավելի տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբաններ, իրավական ուղղվածության լրատվական հաղորդաշարեր, ինչպես նաև փաստաբանների պալատի գործընկեր ու բարերար Ռայմոն Եզեգելյանը:

Ներկայացնում ենք պարգևատրվածների ցանկը.

1. փաստաբան ՋՈՒԼԵՏՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, արտոնագիր թիվ 49՝ երկարամյա (62 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
2. փաստաբան ՄԻՇԱ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, արտոնագիր թիվ 4՝ երկարամյա (51 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
3. փաստաբան ՆԻՎԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ, արտոնագիր թիվ 152՝ երկարամյա (47 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
4. փաստաբան ԼԱՐԻՍԱ ԴՈԽՈՅԱՆ, արտոնագիր թիվ 165՝ երկարամյա (47 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
5. փաստաբան ԳԱԳԻԿ ՍՈԼՈՄՈՆՅԱՆ, արտոնագիր թիվ 166՝ երկարամյա (46 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
6. փաստաբան ՀԵՆՐԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ, արտոնագիր թիվ 168՝ երկարամյա (45 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
7. փաստաբան ՍՎԵՏԼԱՆԱ ՍՈԼՈՅԱՆ, արտոնագիր թիվ 177՝ երկարամյա (44 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
8. փաստաբան ՄԵԼՍԻԿ ԱՂԱԼՈՅԱՆ, արտոնագիր թիվ 123՝ երկարամյա (40 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
9. փաստաբան ՍՈՒՍԱՆՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ, արտոնագիր թիվ 136՝ երկարամյա (40 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:
10. փաստաբան ՄԵԼՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ, արտոնագիր թիվ 173՝ երկարամյա (40 տարվա) փաստաբանական գործունեության և փաստաբանի մասնագիտությանը հավատարիմ լինելու համար:

1. «ԿԵՆՏՐՈՆ» հեռուստաընկերության «ՀԱՆՑԱՆՔԻ ՀԵՏՔՈՎ» հաղորդաշար՝ փաստաբանների հետ արդյունավետ աշխատանքի և հանրային իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու համար:
2. Հայաստանի հանրային ռադիոյի «ՁԵՐ ՓԱՍՏԱԲԱՆԸ» հաղորդաշար՝ փաստաբանների հետ արդյունավետ աշխատանքի և հանրային իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու համար:
3. Iravaban.net իրավաբանական ռեսուրսների պորտալին՝ փաստաբանների հետ արդյունավետ աշխատանքի և հանրային իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու համար:
4. փաստաբան ՄԱՐՏՈՒՆ ՓԱՆՈՍՅԱՆ՝ ֆրանկոֆոն փաստաբանական համայնքների հետ ՀՀ փաստաբանների պալատի կապերն ամրապնդելու և զարգացնելու գործում ներդրած մեծ ավանդի համար:
5. Ռայմոն Եզեգելյան՝ ՀՀ փաստաբանների պալատին մշտապես աջակցելու և ՀՀ փաստաբանների պալատի զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար:

1. Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հայաստանյան ծրագրերի համակարգող ՆԵԼԼԻ ԹՈՒՄԱՍՅԱՆ՝ փաստաբանների համար

իրականացվող ծրագրերի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի հետ արդյունավետ համագործակցության համար:

2. Հայաստանում ԱՄՆ դեսպանատան քրեական արդարադատության բարեփոխումների ծրագրերի ղեկավար ՔՐԻՍՏԻՆԱ ԱՖՈՅԱՆ՝ փաստաբանների համար իրականացվող ծրագրերի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի հետ արդյունավետ համագործակցության համար:
3. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ՝ փաստաբանների համար իրականացվող ծրագրերի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի հետ արդյունավետ համագործակցության համար:

Փաստաբանի օրվա կապակցությամբ փաստաբաններին շնորհավորել են նաև պետական մարմինների ներկայացուցիչներ, այդ թվում՝ շնորհավորական ուղերձներ են հղել ՀՀ Սահմանադրական նախագահ Հրայր Թովմասյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Հայկ Գրիգորյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը, ՀՀ նոտարական պալատի նախագահ Վանինե Հովսեփյանը և Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

KAWAI
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱՐԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱՐԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })